Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 89 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	«Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պաթոհիստոլոգիական լաբորատորիայի արդիականացման նպատակով՝ «Ազնավուր» հիմնադրամը ցանկանում է իրականացնել կենտրոնին սարքավորումների տրամադրման նախագիծ՝ ապահովելով բարձրորակ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հարմարություններ: Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել հյուսվածքաբանական և այլ պաթոհիստոլոգիական փորձաքննությունների հասանելիությունը Լոռու և հարակից մարզերի բնակիչների համար: Ծրագիրը կօգնի կենտրոնը հագեցնել ժամանակակից սարքավորումներով՝ հնարավորություն ընձեռելով մատուցել ծառայությունների ավելի լայն շրջանակ և ապահովել բուժման պատշաճ որակ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանությունը (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաբայան 23/4) և «Ազնավուր» հիմնադրամը՝ սեփական միջոցների հաշվին (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան 6)
4.	Ծրագիր կատարողը	«Ազնավուր» հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան 6, ՀՎՀՀ՝ 02652202)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Գարեգին Նժդեհի փող., 2/42 շենք, «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն Բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	45,300,000 դրամ

7.	Բարեգործության ստացողը	«Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն (ՀՎՀՀ՝ 06945592)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 16-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. «Վանաձոր բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար պաթոհիստոլոգիական լաբորատորիայի մասնագիտացված սարքավորումների՝ նեռարյալ օպտիկական մանրադիտակի, հյուսվածքների պրոցեսորի, լաբորատոր ներդրման կենտրոնի, ռոտացիոն միկրոտոմի, լաբորատոր ջրային բաղնիքի, լաբորատոր հարթեցնող սեղանի, փոքր գծային ներկասարքի ձեռքբերում, մատակարարում և տեղադրում՝ 43,600,000 դրամ. նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 16-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը: 2. Խորհրդատվական, կառավարչական ծառայություններ (ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական ծախսեր), հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում՝ 1,700,000 դրամ. նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 16-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների նկարագիրը	1. Պաթոհիստոլոգիական լաբորատորիայի մասնագիտացված սարքավորումների՝ օպտիկական մանրադիտակի, հյուսվածքների պրոցեսորի, լաբորատոր ներդրման կենտրոնի, ռոտացիոն միկրոտոմի, լաբորատոր ջրային բաղնիքի, լաբորատոր հարթեցնող սեղանի, փոքր գծային ներկասարքի ձեռքբերում, ներմուծում, տեղադրում՝ 43,600,000 դրամ 2. Խորհրդատվական, կառավարչական ծառայություններ (ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական ծախսեր)՝ 1,200,000 դրամ 3. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում՝ 500,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Խորհրդատվական, կառավարչական ծառայություններ (ծրագրի իրականացման հետ կապված աուդիտորական ծախսեր)՝ 1,200,000 դրամ

		2. Հանրային իրազեկման և մարքեթինգային ծախսեր՝ տպագրական և դիզայներական ծառայություններ, հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում՝ 500,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ